

- διὸ τοὺς πόνοὺς ὑπήνεγκε
σταθῆρ' διανοία καὶ χάριτι
Χριστῷ γὰρ πρεσβεύει
τοῦ σωθῆναι ἡμᾶς.
2. Ὁρθρὸς φαιδρὸς ἐδείχθη, παμμάκαρ,
πάσῃ τῇ οἰκουμένῃ,
ἑξαπλῶν τηλαυγῶς
τὸ κήρυγμα τῶν ἀγώνων σου·
σὺ γὰρ ὑπέστης πόνοὺς γενναίως
καὶ βασάνους ποικίλαις ἐγκαρτερήσας,
ὅλης ὁμοῦ
τῆς ἡμέρας βαστάσας τὸν καύσωνα·
δι' ὅπερ θεὸς ἐργάτης
τῆς Χριστοῦ βασιλείας γενόμενος,
Γρηγόριε παναοίδιμε,
παριστάμενος ἔτι λαμπρότερος,
Χριστῷ γὰρ πρεσβεύεις
τοῦ σωθῆναι ἡμᾶς.
3. Ὑδωρ ζωῆς ἐδείχθη, θεόφρον,
τοῖς ἀπίστοις τὸ πρῶτον
καὶ πιστοῖς ἀληθῶς
δείχθεισι τοῖς σοῖς παθήμασιν·
ἐν γὰρ βοθύνῃ προσήξαντές σε
καὶ ἐν ἔτεσι πλείστοις ἐγκεκρυμμένος,
ὥσπερ ἀστήρ
ἑωσφόρος ἐδείχθη, Γρηγόριε,
καὶ τοὺς ἀνεγεννήσας
δι' ὕδατος ἅμα καὶ πνεύματος,
διδάσκαλος ἐχρημάτισας
καὶ κανὼν τε καὶ τύπος πανθαύμαστος·
Χριστῷ γὰρ πρεσβεύεις
τοῦ σωθῆναι ἡμᾶς.

- Ան այս կրեց վիշա, նեղութիւն
Անխախտ կամքով և սիրով.
Ան քրիստոս կը բարեխօսէ նա արդ
Զմեզ փրկելու:
- 25 Առաւօտ լուսաշող երեցար, ով երանելի,
Բոլոր աշխարհի,
Ծաւալելով պայծառօրէն
Հոգակը պայքարներու:
Քաջութեամբ տարար նեղութիւններն
Եւ տանջանքներով զանազան զօրացար դու,
Քու բովանդակ
Երկրաւոր օրերուդ մէջ զիմանալով այրե-
Ան ըլլալով աստուածային մշակ լցումին.
Քրիստոսի թագաւորութեան,
35 Ով գերահռչակ Գրիգոր,
Լցուած նաեւ լոյսով,
Բարեխօսէ Քրիստոսի

26 πάση cod. Corsinianus, omisit Athoniacus. — 29 πόνοις γενναίως Cors. — 33 διὸ ὑπὲρ Θεοῦ
ἐργάτης Cors. — 34 τῆς Athon., τοῦ Cors., nec plura legitur in hoc codice: unus Athoniacus cetera
retinuit.

- per tale opera sopportò fatiche
con fermo volere e con carità:
egli ora prega Cristo
di salvarci.
- 25 Mattino luminoso ti mostrasti, o
a tutta la terra, [beato,
splendidamente diffondendo
la fama delle tue lotte:
tu sopportasti con valore le fatiche
e con svariati tormenti ti fortificasti,
dell'intera tua
giornata terrena sostenendo le pene,
divenuto per ciò divino operaio
del regno di Cristo,
- 35 o famosissimo Gregorio,
mostrandoti anche pieno di luce,
preghi Cristo
di salvarci.
- 40 Acqua di vita tu apparisti, o saggio,
dapprima agli infedeli
e poi ai fedeli senza finzioni
colle tue palesi sofferenze:
gettato in una fossa
dove rimanesti sepolto per molti
anni, [anni,
mattutino ti mostrasti, o Gregorio,
e i tuoi persecutori rigenerasti
per mezzo dell'acqua e dello Spirito
maestro tu fosti [Santo:
50 e regola ed esempio meraviglioso
e preghe Cristo
di salvarci.

Զմեզ փրկելու:

- 40 Կեանքի շուր երեցար դու, ով իմաստուն,
Նախ անհաւատներուն,
Ու ապա հաւատացեալներուն՝ ճշմարտապէս
Քու յայտնի չարչարանքներովդ.
Նեղուած վիրաւի մը մէջ,
Ուր տարիներով թաղուած մնացիր,
45 Որպէս աստղ մը
Առաւօտեան յայտնուեցար, ով Գրիգոր,
Եւ հալածիչներդ վերածնար
Զուրով և Սուրբ Հոգով:
Եղար դաստիարակ
50 Եւ կանոն ու օրինակ հիանալի,
Բարեխօսէ Քրիստոսի
Զմեզ փրկելու:

Dott. ELPIDIO MIONI

ԲԱՐՍԵՂ ՇԱՀԱՊԱԳԻ

ԵՐԵՎԱՆԻ ԱՆՏԻՊ ԵՍՄԱԿԵՆԵՐ

Բարսեղ Շահապաղի քոյրը, Տիկին Զապել Պաերի,
դրված է մեզի հետեւեալ անտիպ նամակները,
համեմբա հաւատարմ կենսագրական գծերով, զոր
սիրով ու համոյով կը հրատարակենք հոս:

ԿԵՆՏԱՐԱՐԱՆ ԵՍՄԱԿԵՆԵՐ

Բարսեղ Շահապաղ ծնած է Պոլիս, 23 յունիս
1883ին. զաւակն է այն ամեն ծանօթ փաստարան
Նաղարէթ Շահապաղի: Իր նախնական կրթութիւնը
Պոլիս անկէ էտքը, զրկուեցաւ վեներելի Մու-
րատ-Ռաֆայէլեան վարժարանը, որուն ընթացքը
բաւարարէր շատ փայլուն ու յաջող կերպով: Պոլիս
բոլորեց շատ փայլուն ու յաջող կերպով: Պոլիս
դարձին, պահ մը լրագրութիւն ըրաւ, յետոյ Օր-
մանեան Սրբադանին դէմ կատարուած մահափոր-
ձին առնել, իրեն տարեկից շատ մը երկտարար-
ներու պէս՝ հարկադրուեցաւ արտասահման անց-
նել, Համբուան սարսափներէն ճողոպրելու հա-
մար: — Եղիպտոսի մէջ, առեւտրական մեծ ձեռ-
նարկի մը մէջ կարեւոր պաշտօն մը ունեցաւ,
նորից 1908ի Օսմ. Սահմանադրութեան հը-
ղոր ձեռքը 1908ի Օսմ. Սահմանադրութեան հը-
ղոր ձեռքը, եւ վերադարձաւ Պոլիս:

Դեռ վեներելի եղած առնել, Ա. Ահարոնեանի
ազդեցութեան տակ արձանագրուած Հայ Յեղա-
փոխական շարքերու մէջ, անկէա նուիրուած Հայ-
բենասէր մը եղաւ՝ մինչեւ իր զոհութիւնը: 1908ին
զրկուեցաւ Հայկական դաւանանքը, բրթակաւոր
պաշտօնով, եւ իր պերճախօսութիւնով՝ տանեալ
քաղաքներու մէջ՝ իր ազգակիցներուն հայրենա-
սիրական զգացումները հրահրեց: Յաջորդ տարին,
Պոլիս դարձին, Կիլիկիոյ ջարդերը, Պոլսոյ յե-
տադիական շարժումը՝ արթնցուցած էր հայու-
թիւնը: Բարսեղ վերադարձաւ Եղիպտոս, իր պաշ-
տօնին, ուրկէ սակայն վերջնականապէս կը հրա-
ժարէր 1912ի աշնան, երթալու համար Բարսեղ,
ուսանելու իրաւարանութիւն:

Երկու փայլուն տարիներու յաջողութենէն ետ-
քը, Բարսեղ Շահապաղ, 1914 Օգ.ին՝ ընդհ. պա-
տերազմի յայտարարութեան, Պոլիս վերադարձաւ
կրկին, իր կնոջ և նորածին աղջնակին հետ:
Հայասէր Վերթման Պէրաքի բերանացի խորհուրդ-
ները կը բերէր՝ իր կուսակցական ընկերներուն:
Թուրք ոստիկանութեան ճուղակը ինկած այդ
կերպով, 1915 ապրիլ 24ի եղբակցական օրը ձերբա-
կալուեցաւ իր բոլոր մտաւորական ընկերներուն
պէս, տարուեցաւ Այազ, եւ անկէ, քալելով, քաշ-
կալուեցաւ քառասուն օր մինչեւ Պարսկերդ, եւ
հոն սպաննուեցաւ:

Երկտարար, բարեկազմ, զեղեցիկ, ծառուած
հաւատարմապէս խօսելու եւ գրելու կրկնակ կարո-
ղութիւններով, մէկ քանի լեզուներու իր հմուտ-
թիւնովն ալ մանաւանդ, Բարսեղ Շահապաղ կոչ-
ուած էր մեծ գեր մը կատարելու՝ ազգային թէ-
միջազգային կեանքի մէջ, եթէ չզոհուէր, 32 տա-
րեկանին, Մեծ Եղեռնին:

Շատ կանուխն զրաւ է բանաստեղծութիւններ.

մեծ մասը անտիպ: Կ'աշխատակցէր կանոնաւորա-
պէս «Ազատամարտ»ին, եւ Բարսեղ եղած տարիներ-
ուն՝ կը խմբագրէր, Միքայէլ Վարանդեանի հետ,
«Pro Armenia»ն, զոր կը հովանաւորէին նախ
Բիւն Բիւն, յետոյ Ֆրանսիոյ դը Բրէսանսէ և
Վերթման Պէրաք:

(Բարսեղ Շահապաղի նահատակութեան մանրա-
մասնութիւնները կարելի է գտնել՝ Արամ Անտո-
նեանի 1919ին Բարսեղ հրատարակած մէկ տարե-
ցոյցին մէջ):

Ա.

... Գիտես որ ինչքան քիչ պիտի ըլ-
լան, հազիւ մատի վրայ համրուելու չափ,
այն անձերը որոնք պիտի կրնան դնահա-
տել, բարոյական արժէքը առած քայլիս:
Կա՞ն, ըսէ՛, դու ըսէ՛, կան դեռ աշխարհի
վրայ մարդիկ որոնք հասկնան, ընդունակ
ըլլան հասկնալու թէ նիւթական աշխար-
հէն դուրս, անկէ վեր կայ եւ մտաւորական
աշխարհը, հոգեկան աշխարհը, որուն մէջ,
այո՛, հարկաւ, տանջանքները աւելի շատ
են, աւելի սուր ու խորունկ, բայց ուր եւ
բաւարարութիւնները նոյնքան intense են:
Ի՞նչ օգուտ ամէն օր իւզոտ ուտել եւ սա-
կայն պարտաւոր ըլլալ լսել նաեւ ամէն օր՝
ո՛ր եւ է բաքօնի կծու աղնարկութիւնն
ու չեխը:

Օ՛ր, խոհմութիւնը, օ՛ր, զգուշութիւ-
նը, օ՛հ, հերիք ծանրացան կուրծքիս վրայ
երկանաքարերու պէս: Ի՞նչ դարհուրելի
չղթանք են եղեր ատոնք, Տէր Աստուած,
մանաւանդ երբ մարդ կորսնցնելով իսկա-
կան չափերն ու արժէքները, կ'իշխայ չա-
փազանցութիւններու մէջ: Տէ՛, լա՛ւ հաս-
կըցանք, պիտի ապրինք, ուղենք չուղենք,
սա անիծած կեանքը պիտի ապրինք, ութ
տարի, տաս տարի եւս, լա՛ւ, քսան տարի
եւս, յետո՛յ, յետո՛յ, յետո՛յ: Դո՛ւն ըսէ:
Յետոյ, դուն ալ հոն ես, ե՛ս ալ, հարուս-
տըն ալ, աղքատն ալ, ո՛ր եւ է ծառի մը
չուքին տակ, 1 ու կէս մէթը երկայնու-
թեամբ ու խորութեամբ սենեակի մը մէջ
ճղնելու վրայ: Այս չէ՞ կեանքը, ըսել կ'ու-
ղեմ՝ նա անցողական չէ՞, ժամանակաւոր
չէ՞: Ալ ի՞նչ զօրով չղթանքով կապուել

անոր, անոր վիզին փաթթուել կախուել, պաղատելով որ ամէն զինով, կարելի եղածին չափ երկար տեւէ: Է՛, անիկա իր ճամբան կ'ընթանայ, դուցէ արհամարհելով աւելի կարելի ըլլայ ստանալ անկէ:

Տե՛ս, ես նորէն «դուցէ» ըսի, շատ կարմիր չերեւնալու համար, կան որ կ'ըսեն ո՛չ թէ «դուցէ», այլ «հարկաւ»: Այո՛, կան որ կը հաւատան թէ կեանքի մէջ ուժեղագույնը ըլլալու միակ միջոցը՝ դայն արհամարհել զիտնալն է:

Բայց ահա՛ արդէն անգամ մը եւս extravagant միտքերու մէջ ինկած Բարսեղը: Անանկ որ, զիտնալով, յանկարծ անդրադառնալով միջավայրին ուր պիտի հասնի նամակս, կանգ կ'առնեմ: Պահանջքս քեզի է միայն եւ Ատրինէին*: Եթէ աշխարհք կործանի, եթէ բոլոր մեծ ու սղտիկ պուրժուաները, դրամի երկրպագու եւ կեանքին ոտքերը համբուրող ցաւագարները իրար անցնին ու սկսին իրենց բուռի վայերը դադարաւորին երգիքներուն քովերը, դոնէ դուք երկուքդ, դոնէ՛ դուք, հասկցող հոգիներ, պիտի ցցէք գլուխնիդ ու պիտի պոռաք:

— Բարսեղը դրամը չուղեց, ուղեց միտքը:

Այսչափ, ձեզմէ ուրիշ ոչինչ չեմ խնդրեր: Ինծի մի քարոզէք անդադար խոհեմութիւն: Ա՛խ, կեանքը առանց այդ քարոզին արդէն զիա ու բոլոր մարդերը ըրած է պէտք եղածէն աւելի խոհեմ եւ զգոյշ, անոր համար ալ, եւ նոյն համեմատութեամբ սրացք, հոգիի սրացքը նուազեր է եւ բոլորը դարձեր են մանր մանր հաշուադէտներ, պատառ մը հացի ետեւէ վաղողներ երկչոտ, սարսափահար: Ա՛խ, դուք երկուքդ եղէք հակառակին քուրմերը: Ա՛ն է դժուար: Ան է՛ դժուար: Մարդոց մէջ

(*) Քոյրը, Ատրինէ Տէրտէրեան, որ 1915ին աւագանութեան՝ նահատակուեցաւ իր ութ տարեկան տղուն՝ Շաւարշին հետ, Շար-գըլայի կողմէրը:

նիւթին պաշտամունքը դրդուել հեշտ է, ո՛ր, եղի՛ճի պէս դիւրարոյս, յարածուն է նիւթին սէրը, ոռոգումի խիղճի կարօտի: Կրնա՞ք ընել հակառակը, խենթութիւն սերմանել, արհամարհանք ներարկել մարդոց, եւ քաղել մեծ դործեր, խորունկ դործեր, բեղուն դործեր:

Ես վերջացուցի: Պիտի ըսէք Բարսեղը դարձեալ ողբերուներ է: Հա՛, հակառակ չեմ: Նորէն ողբերուներ եմ: Վայ անոնց որ չեն զիտեր այս խանդավառութեամբ ողբերուել: Յետոյ պիտի աւելցնէք. — Երկար չի տեւեր: Հա՛, ատ ալ կրնայ ըլլալ: Ան ալ հոգս չէ: Ձեզի հաղար անգամ բացատրեր եմ, վայրկեաններ կան որ յաւիտեանականութիւններ կ'արժեն: Եղա՞ւ: 30 Օգ. 1912

Բ

... Օ՛ր, ի՛նչ décharge, ի՛նչ հոգեկան ու Փիլիքական պայծառութիւն երբ այս երկուշարթի եւ երեքշարթի տուի քննութիւններս յաջողութեամբ մը որ հաղուարկու է (ներողութիւն այս ինքնահաւանութեան): Ստացայ ընդհանուր միջին 15 (20ի վրայ. 10 ստացողը կ'անցնի) եւ հետեւաբար reçu avec mention: Droit criminel-ի եւ Procédure criminelle-ի քննութեան ժամանակ Mr. Garçon-ը որ կը ճանչնաս եւ որ անստղիտ բրօքէսէօր մը եւ համաշխարհային հեղինակութիւն մըն է, բայց ճիւղ մը քննութիւններու տուն, հրապուրուած պատասխանելու ձեւէս, հրապարակաւ հարցուց.

— Monsieur, de quel pays êtes-vous?

Պատասխանեցի.

— Monsieur, je suis Arménien de Turquie.

Մօրուքը ձեռքը առաւ. սրտ մը խորհեցաւ եւ դառնալով աջ ու ձախ ինձ հետ քննող ընկերներուս որոնք Փրանսացիներ էին, ըսաւ «օրինակ առէք եւ աշխատիլ սորվեցէք»: Իսկ իրրեւ թուանշան դրաւ ինձի 15 ինչ որ հրաշք է ըսին ու կ'ըսեն

բոլորը: Mr. Garçon-ին 10-12 թիւերէն բարձր թիւ դնելը իրրեւ պատմական դէպք կը հաշուուի կոր Faculté ին մէջ:

Վերջապէս, չաղակրատութեանս ներս — դամիտ եղիւ, նոյնպէս ինքնագովութեանս, — որուն զիտեմ միակ justification-ը կրնայ ըլլալ հոգեկան բաւարարութիւնը որ կը զգամ այս պահուս եւ սոսկալի մը — տաւորական յոգնութիւնը որուն տակ կը դանուէի:

Ուրեմն, հիմա, Bachelier de Droit եմ — դալ տարի այս ատեն Licencié, եթէ Աստուած յաջողէ, եւ հաւանաբար Spécialiste criminologue — որովհետեւ պատժական ճիւղին համար կայ մասնաւոր բաժանմունք մըն ալ որուն հետեւելու մտադրութիւն ունիմ: Այդ ճիւղին մէջ կը սովորուի փորձառական հոգեբանութիւն, Médecine légale, Droit pénal approfondi et comparé, Science pénitentiaire, Procédure criminelle approfondie et comparée, եւն, — պատրաստելու համար մասնագէտներ պատժական իրաւագիտութեան:

Տեսնենք, եթէ նիւթական, Փիլիքական եւ մտաւորական պայծառներս ներեն այդքան բեռը տանելու — բացի Licence-ի ուսումներէն որոնք քիչ չեն նոյնպէս:

Հիմա որ խաղաղութիւն տիրեց միտքիս ու հոգիիս մէջ, հիմա ալ աշխարհք իրար է անցեր եւ հաւանաբար պատերազմի մը նախօրեակին կը դանուինք: Մէրաֆ մի՛ ըներ, հիմա ալ նորէն առիթ կ'ունենաս կարդալու գրուածքներս: Ափսո՛ս որ տարուած

Ժողովարկով, հնարաւորութիւն չունիմ կարգի դնելու գրածներս...

Գ

Ուրիշ նամակի մը մէջ կ'ըսէ, անշուշտ Պալ-ֆանեան պատերազմին ակնարկելով.

Բարեկ, 8 Հոկտ. 1912

Պատերազմի լուրերը իրաւ լուրջ երեւոյթ առնել սկսան, բայց եւրոպական պետութիւններն ալ սարսափի մէջ են որ ծայրը իրենց կը դաչի եւ ողի ի բռին աշխատելու վրայ են փոթորիկը խաղաղեցնելու համար: Տեսնենք ի՛նչ պիտի ըլլայ: Հիմա, երեւի, թուրքերն են որ «հայրենասիրական կրակով վառուած» կ'ուզեն արիւն թափել եւ ամբողջութիւն եւրոպական Continent-ին վրայ: Թո՛ղ թափեն նայինք արիւննին. ան թող թափէ, միւսը թող թափէ եւ մէջտեղը խաղաղ ապրիլ ցանկացող աշխատաւորները թող ճգմունին: Հիմա որ եւրոպական պետութիւնները հանդիսաւորապէս խօսք կու տան Պալքանի թագաւորութիւններուն իրենք ձեռք առնել «Մակեդոնիոյ բարենորոգումներուն դործը», մեր Ազգ. Ժողովը ինչ մտածելու վրայ է Հայաստանի դատին վերաբերմամբ: Բոլորն շատ նը — շանակելի է ու պատմական. ամէն օր չեն պատահիր այսպիսի վայրկեաններ: Արդեօք նորէն անոնք մտահոգուած են Երուսաղէմի խնդրով:

Բարսեղ Շախպալ